

ՔԱՐՈՉԽՈՍԱՎԿԱՆ

**Տ. ՇԱՆԵ ԱԲԵՂԱ ԱՆԱՆՅԱՆԻ ՔԱՐՈՉՐ՝ ԽՈՍՎԱԾ
Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ**
(3 փետրվար, 2013 թ.)

«Ով ինձ հավարտմ է, նրա ներսից կենդանի ջրի
գեղեր պիտի բխեն»
(Նովի. Է. 47):

Միտլի բույրեր և եղբայրներ ի Քրիստոս,

Ավերարանական ընթերցվածը մեզ Քրիստոսի խոսքի ու վարդապետության մա-
սին խորհելու և մեր մտածումները իրար հետ բաժանելու բավականաչափ առիթ ու նյութ
է պալիս: Նովիաննես ավերարանիչը կարծես այսօր էլ, խոսքի ու ներշնչանքի իր հրա-
շալի համադրությամբ, մեզ փանտում է դեպի Աստուծո Միածին Որդու՝ Նիսուս Քրիստոսի
կերպարի հանապազօրյա բացահայտման:

Նովիաննու Ավերարանի յոթերորդ գլուխը հավաքացյալ ընթերցողներին նախա-
պարտասպում և մտովի փնտրելու է դեպի պարմական Երուսաղեմի ամենաթեժ ու
բազմամարդ օրերից մեկը՝ Տաղավարահարաց փոքր, երբ ամբողջ Նրեսսարանից ու մեր-
ձակա շրջաններից փասնյակ հազարավոր հրեաներ գալիս էին փոնախմբելու Մովսեսի
օրենքով սահմանված փոքր (Ղևուր. ԻԳ. 35): Նրեսսարանի ու Պաղեստինի ամենապար-
բեր շրջանների խայրաբղեր մշակույթներով ու փարագներով, բարբառներով ու փա-
ճարի շուրջ վիպացող առևտրականներով լցված Երուսաղեմն այդ պահին ավելի շար
նմանվում էր ոչ թե կրոնական մայրաքաղաքի, այլ ժողովրդական հեղափոխությունը
բավարարել պարտասպվող մի թարերաբեմի: Աշնան սկզբին ընկնող երրորդ ամենա-
մեծ այս փոքր բերքահավաքի հիշարարությունն էր, երբ ամեն մարդ քիչ թե շար լիա-
ցած էր սրացած բերքով, քիչ թե շար պարտասպ՝ խնջույթի և ուրախության ծիծաղի
մեջ մոռանալու Երուսաղեմում հավաքվելու իրական նպարակը՝ Օրենքի կարարումը:
Փողոցները Երուսաղեմում լցվում էին բազմաբնակ մրգերի անուշաբույր հոտով, հա-
զարավոր մարդկանց հոգնած ուրբերից էլնող փռշին, միախառնվելով փարբեր լեզու-
ների ու բարբառների, մրգերի ու ամբոխի բույրերին, կարծես շղարշում էր մարդկանց
աչքերից պարմական այն հեռավոր անցյալը, երբ Տերն ինքը պարվիր էր հրեաներին

հավաքվել էր առաջ՝ իբրև համագային պաշտամունքի ու ազարագրության հիշատակության առիթ:

Եւ ահա հենց այդ փոռի վերջին օրը, ինչպես նշում է Նովհաննես Ավերարանիչը, Նիսուս աղաղակում է՝ ասելով. «Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա ու խմի: Ով ինձ հավաքում է, - ինչպես Գլիքըն է ասում, - նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի հոսեն» (Նովհ. Է. 37-38): Որքան նման է ավերարանական այս դրվագը հինկրակարանյան մարգարեների բոցավառ ու փրկական կերպարներին, երբ անխնա եւ անաչառ մագարեական մտքակերպ աջ ու ձախ խարանում էր Տիրոջ օրհնքի ոգին մոռացած եւ հոգևոր սովով ու ծարավով փառապաղ խրայելացիներին: Նավանաբար համապարած խինդ ու ծիծաղի, հացի ու գինու լիառապության մեջ Նիսուսի խոսքերը հենց այդպես էլ հնչեցին. հրեաներից ոմանք կարծես լսեցին երկար սպասված մարգարեին, մյուսներն էլ քեսան Օծյալ Մեսիային, որ պիտի Իսրայելին փրկեր ստրկության լծից: Նույնիսկ Նիսուսին բռնելու ուղարկված սպասավորները, քահանայապետների ու փարիսեցիների մոտ վերադառնալով, ապշահար եղած ասացին. «Ոչ մի մարդ այնպես չի խոսել, որքան այս մարդը»:

Նիսուս Քրիստոսի խոսքը բազմիցս հնչեց թե՛ Երուսաղեմում, եւ թե՛ նրա սահմաններից դուրս, Նրա գործվագութ ձեռքերը փրանյակ հիվանդների բժշկեցին, սակայն նրանով միայն հիացան, նրա խոսքի ու վարդապետության վրա միայն ապշեցին ու զարմացան, բայց ոչ ավելին: Քչերը միայն եկան Նիսուսի մոտ ու խնդրեցին փալ կենդանի ջուրը, հավիլունական կյանքի խոսքերը: Քչերը միայն քաջություն ունեցան Նրան Աստուծո Որդի դավանելու, նրա ոտքերին փարվելու եւ թողություն հայցելու: Բայց այդ քչերին Նա փակեց կենդանի ջուրը. Քրիստոսին հավաքացողները դարձան հորդառապ աղբյուրներ, որտեղից հոսեց ու փարածվեց Աստուծո կենդանի խոսքը: Քրիստոսի հարությունից հետո դեռ շար ու շար մարդիկ կրկնեցին քահանայապետների ու սպասավորների զարմացական խոսքերը՝ «Ոչ մի մարդ այնպես չի խոսել, որքան այս մարդը»: Նրան հավաքացողներն ու նրա հրաշքի ականաբեռները ոչ թե գնացին գրքի մեռած փառի մեջ փնտրելու Մեսիայի ծննդավայրն ու ծննդյան հանգամանքները, այլ անմիջապես իրենց սրբի մաքրանում անջնջելիորեն գրեցին նվիրական անունը՝ Նիսուս Քրիստոս: Թերթեր Գործք Առաքելոց գիրքը եւ կրեաներ հավաքի ու նվիրումի այն հորձանույրը, որով փոթորկվում էին առաքյալները, կենդանի ջրի ու խոսքի հորդահոս գետը, որով մեզ հետ իր նամակներով խոսում է Պողոս առաքյալը:

Սիրելիներ, Նիսուսի անձի ու Կենդանի ջրի աղբյուրի այս գեղեցիկ համադրումը միայն մեկն է ավերարանական այն բազմաթիվ գոհարներից, որոնցով կառուցվում է նորկրակարանյան խճապարկերը: Բայց նաև գորավոր մի պարզամտ է ամենքիս, որ ականաբեռներն ենք նյութականի ու հոգևորի հարաբերականացման ժամանակաշրջանի: Կարծում եք Նիսուսի այս խոսքերը նույն ներգործումով չե՞ն հնչում այսօր հոգևոր ծարավի ու սովի մեջ հայրնված բոլոր մարդկանց համար: Նյութական առաջընթացի ու բարելավման փեսականով ապրողներին համար մի՞թե բոլոր այլ՝ քաղաքական եւ ոչ քաղաքական խոսքերից փարբեր չպիտի հնչի Տիրոջ խոսքը, բոլոր մարդկանցից ավելի

դարբե՛ր չպիտի խոսի մեզ Նխուս: Այո՛, ոչ մի մարդկային խոսք այնքան խորը չի թափանցում մեր էություն մեջ, այնքան նրբորեն չի մաքրում մեր խիղճն ու հոգին, որքան Կենդանի ջրի աղբյուրից բխող հորդառափ գեղը, որի վրա ապահով լողալու համար մեզ անհրաժեշտ է հավաքի ու աշխատանքի մակույկը: Ոչ մի մարդկային խոսքում այնքան չի գվարթացնում ու հանգստացնում կյանքի լուր ու միապաղաղ ընթացքից հոգնած մեր ծնկները, որքան Տիրոջ խոսքը. «Մի՛ վախեցիր, ես եմ Սկիզբը եւ Վախճանը, ես եմ կյանքը, ես եմ, որ մեռա, եւ անավասիկ կենդանի եմ հավիպյալս հավիպեանից» (Նայրն, Նովի. Ա. 17-18): Ավելի չերկարաբանելու համար ձեզ իբրև օրինակ մի հեղափոխիչ պարամոթյուն-առակ բերեմ: Աշխատանքի շրապող մի մարդ նավակ է նստում, եւ հանկարծ փրկւնում է, որ թիավարը երկու թիակներից մեկի վրա փորագրել է «Նավար», մյուսի վրա «Աշխատանք» բառերը եւ հանգիստ թիավարում է դեպի դիմացի ափը, ուր եւ շրապում էր մարդը: Վերջինս գարնացած խնդրում է թիավարին. «Եղբայր, չե՞ս կարող բացապրել, թե ինչո՞ւ ես թիակներիդ վրա փորագրել «Աշխատանք» եւ «Նավար» բառերը»: «Նավարը հոգուս կերակուրն է, աշխատանքն էլ՝ մարմնիս»: Մարդը ժպտում է. «Աշխատանքը հասկանալի է եւ գովելի, բայց ինչի՞դ է պետք հավաքը»: Այդժամ թիավարը թողնում է «հավաքի» թիակը եւ միայն մեկ թիակով շարժում նավակը: Այն այլևս առաջ չի լողում, այլ միայն պտտվում է փրկում:

Շար քարբեր չէ, սիրելիներ, Նխուսի խոսքն ընդունելու պարբաստվող մարդու պարպականությունը: Նոգեւոր ծարավն ու այն հագեցնելու ցանկությունը դեռես բավարար չեն Կենդանի ջրի աղբյուրին մոտենալու. հարապել աշխատանքն ու հավաքն են Քրիստոսին հավաքացող մարդու ներսից բխեցնում կենդանի ջրերի գեղերը, որոնցով նա բարեբեր ջրաբուքի է ենթարկում իրեն շրջապապող մարդկանց հոգիներն ու սրտերը:

Թող Տիրոջ հանդեպ հավաքն ամենքիս այսօր եւ հավիպյալս պարզեւեն Նխուս Քրիստոսի Կենդանի խոսքի ու Մուրք Նոգու կենարար պարզեւենքը. ամեն: